

**PRESS RELEASE**

**Diocese of the Armenian Church of Australia & New Zealand**

**10 Macquarie Street**

**Chatswood NSW 2067**

**AUSTRALIA**

**Contact: Marina Avagyan**

**Tel: (02) 9419-8056**

**Fax: (02) 9413-1709**

**Email: [primate@armenian.com.au](mailto:primate@armenian.com.au)**

## **Հովուական այց Նոր Զելանդիա**

Յունիսի 2-ին Աստրալիայի և Նոր Զելանդիայի թեմի առաջնորդ Տեր Ադան Արքեպիսկոպոս Պալիօզեանը հերթական առաջնորդական հինգօրեայ այցով մեկնեց Նոր Զելանդիա՝ հանդիպելու տեղի հայ համայնքին:

Սրբազան Հօրը ուղեկցում էր Մելբուրնի Սուրբ Աստուածածին Եկեղեցու հոգևոր սպասաւոր՝ Հայր Կիրակոս արեղայ Դարթեանը:

Օկլանդի օդանաւակայանում Սրբազան Հօրը ջերմօրէն, հայկական դրօշակներով և ծաղկեփնջերով դիմաւորեցին Նոր Զելանդիայի հայ համայնքի անդամները՝ գլխաւորութեամբ փոխատենապետ Յակոբ Եալոզեանի:

Կիրակի օրը Օկլանդի Անգլիկան եկեղեցու (Anglican Church) մեջ, ներկայութեամբ, առանց որևէ չափազանցութեան, Օկլանդում ապրող բոլոր հայերի (100 հոգի) Սուրբ և Անմահ Պատարագ մատուցեց: Պատարագիչն էր՝ Հայր Կիրակոս արեղայ Դարթեանը: Պատարագը ուղեկցեց Օկլանդի հայ համայնքի ուժերով ստեղծուած երգչախմբի հոգեթով երգերով: Երեք օր Օկլանդի հայ համայնքը վայելեց Սրբազան Հօր ներկայութիւնը՝ ստանալով նրա օրհնութիւնը և պատգամը:

Սրբազան Հայրը օրհնեց, մկրտեց, աղօթեց, կատարեց հոգեհանգստեան արարարողութիւն համայնքի հանգուցեալ անդամների համար: Թէպէտև թով փոքր գաղութ է, բայց շատ հաւատաւոր, հայրենասէր և միաբան գաղութ է, ուրախութեամբ նշեց Սրբազան Հայրը: Երկուշաբթի առաւօտեան նա մեկնեց մայրաքաղաք Վելլինգտոն, որտեղ Յունական եկեղեցում մատուցեց Սուրբ և անմար պատարագ՝ ներկայութեամբ տեղի շուրջ 60 հայերի, ինչպէս նաև տեղացի ասորի, արաբ-քրիստոնէայ, ռուս և գերմանացի հաւատացեալների:

<<Ուրախութիւն է մեզ համար, որ Նոր Զելանդիայի այս փոքրիկ համայնքի անդամները արթուն են պահում իրենց հոգիներում լոյս հաւատքը մեր հայերի, որ հայոց կեանքում արմատաւորեց քարոզչութեամբ Սուրբ Թադէոս և Սուրբ Բարդուղիմէոս առաքեալների: Իւրաքանչիւր հայ, ուր էլ որ նա լինի, որպէս մի մասնիկը մեր ժողովրդի պէտք է գիտակցի, որ հոգու պարտք ունի ողջ հայութեան առջև: Մեր

բազում ազգային նպատակները, նւիրական իղձերն ու երազանքներն իրականութիւն կդառնան, երբ մեր անհատական կեանքը լոյս դարձնենք մեր հաւաքական կեանքի համար>>, աւելացրեց Սրբազան Հայրը:

Սրբազան Հօր այցելութիւնը մեծ իրադարձութիւն է Նոր Զելանդիայի հայկական համայնքի համար, որոնք այդ օրւան սպասում են մեծ անհամբերութեամբ: